

մարէ քարերով շինուած»։ ԺԲ. դարուն այս աղբիւրին մօտ շինուեցաւ Ս. Գարրիէլ եկեղեցին։

Փոկաս (1181—1185) կը յիշատակէ այս եկեղեցիին գոյութիւնը իր ստորերկրեայ մատուռովը։ Ան կը հասկցնէ թէ եկեղեցին նուիրուած է Գարրիէլ հրեշտակապետին, վասնզի ան առաջին անգամ երեւցաւ աղբիւրին մօտ։ Յիսուսի մանկութեան անվաւեր աւետարանը կը գրէ. «Երբ Ս. Կոյսը ջուրին ամանը առնելով տունէն դուրս ելաւ ջուր առնելու համար, ձայն մը ըսաւ անոր. Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս։ Մարիամ ոչ ոք տեսաւ ու տուն գնաց. և երբ ծիրանի կը մանէր, հրեշտակը ներկայանալով ըսաւ անոր. Մի՛ երկնչիր Մարիամ և այլն. ընդհակառակը Ս. Ղուկաս կը պատմէ թէ այս խօսքերը «Ուրախ լեր բերկրեալդ... և այլն» հրեշտակը Ս. Կուսին ըսաւ *smn mskhkh jksnj* (Bar. gd. էջ 378, E. T. P. էջ 185)։

Սինակոկը. — (Ս. Ղուկաս Ա. 14—30), նազաւրէթի սինակոկներէն մէկուն մէջ երբ Յիսուս քարոզելով կը բացատրէր Եսայի մարգարէին խօսքերը (ԿԱ. 1—2), հրեաները բարկանալով Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին և տարին զԱնիկա զահալիժելու համար մինչև լերան գլուխը, ուր շինուած էր անոնց քաղաքը. «նա անցեալ ընդ մէջ նոցա՝ գնայր»։

Այս սինակոկին աւանդական տեղւոյն վրայ շինուած է մատուռ մը զոր Արաբները կը կոչեն *Մհարիսի* եւ *Մհարիսի* որ 9.20 երկայնութեամբ և 8 մ. լայնութեամբ ուղղանկիւն սրահ մըն է՝ կամարով մը ծածկուած։

2. գարու Բլէզանսի ուխտաւորը կը յիշատակէ